

## «Ավետիս» երգող խմբերի տնայցը

Ընտանիքը նոր էր բոլորած լինում ընթրիքի սեղանի շուրջ, երբ սկսվում էր «Ավետիս» երգող խմբերի այցը: Մպիտակ շապիկ հագած պատանիների 3-5, երբեմն՝ 6-7 հոգիանոց խմբերը շրջում էին տնետուն: Առջևից գնում էր «շուն թակոդը»՝ մահակը ձեռքին, (սա պետք է քշեր հարձակվող շներին), նրան հետևում էին «այլուր տանողը»՝ տոպրակը շալակին, «ձու հավաքողը»՝ թասը գլխին և մյուսները: Նրանցից մեկը կամ երկուսը մտնում էին տուն, իսկ մյուսները բարձրանում էին տան տանիքը և երդիկից պարանով կամ գոտիներով կախում տոպրակ կամ գուլպա կամ քթոց (սալա): Երգում էին «Ավետիս», որոնք շատ բազմազան էին: Դրանցում դրսևորված էին Քրիստոսի ծննդյան ու կյանքի վերաբերյալ ժողովրդական պատկերացումները, գովերգվում էին Փրկչի առաքինությունները, հրաշագործությունները և այլն: Սակայն կային Քրիստոսի հետ կապ չունեցող երգեր, որոնցում հնչում էր ընտանիքին արվող բարեմաղթությունների թեման, և, այնուամենայնիվ, որպես ծննդյան երգեր, դրանք նույնպես կոչվում էին «Ավետիսներ»: Բոլոր երգերը վերջանում էին «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, մեզի, ձեզի մեծ ավետիս» խոսքերով: Ավետիս պատողներին գյուղացիները տալիս էին ձու, յուղ, դրամ և ուրիշ նվերներ:

## Ամանօրյա և ծննդյան երգեր

- Ձեր տան սներ ծառ ին խնկի,
- Պատեր շարուկ մարմար քարեն,
- Ալաշ վերեն ծալ-ծալ ոսկի,
- Խողն ի վերեն սուրբ մարգարիտ,
- Խարսներ ինի՝ քանց աղունակ,
- Ավելն ի ձեռ՝ փունջ մանուշակ,
- Ձեր անդրանիկի անուն ի՞նչ ի:
- Արամ ի:
- Արամ ճութ էր, էլ ճթացավ,

Քանց բարդի ծառ էլ հերկնցավ,  
Քանց ուռի ծառ էլ կանաչավ,  
Քանց կաղնի ծառ էլ պնդացավ,  
Ճղեր թալեց քաղքե-քաղաք,  
Ամեն ճղին՝ ջուխտմ ճրագ,  
Արամ նստեր ծառի տակին,  
Գավաթն ի ձեռ նռան գինին:

➤ - Ձեր տուն մտնի խազար բարի,  
Հաճար, ցորեն, կորեկ, գարի,  
Լիքը խորեր շատ ունենաք,  
Կարմիր օրեր շատ ունենաք,  
Կարմիր օրով, կարմիր շորով,  
Ուրախ կենաք՝ լիքը տնով:

➤ - Մամիկ, մամիկ, ես քե ծառա,  
Դուռ մառանին մեկ գյավ արա,  
Սուլեր խազի, որ ճովոա,  
Կուրնին խազի, որ խշխշա,  
Մաղմ կոքյով, մեկ էլ չամիչ,  
Բեր տղեքներ ճամբխու արա:

ալաշ - ծղոտ

ինի - մեջ

ճուր - ամուր

գյավ – քայլ

կուրնի – մետաքսյա շրջագգեստ

կոքյով – ընկույզ

➤ Ծառ մի կանչեր, ծառ մի կանչեր, ավետիս,  
Շարոց բերեք, պաստեղ բերեք, ավետիս,  
Մեր հարսներուն փայն ալ բերեք ավետիս,

Գինի բերեք, գաթա բերեք, ավետիս,  
Չիր ու չամիչ հետը բերեք, ավետիս,

Ամեն տարի հասնինք բարով, ավետիս,  
Երկար կենոք, առողջ անձով, ավետիս,  
Մի կենաք հետ մարդու խռով, ավետիս,  
Այլ խոսեցեք անուշ լեզվով, ավետիս,  
Որ դուք մնաք երկար ամով, ավետիս:

➤ Այսօր տոն է ծննդյան, ավետի՛ս,  
Աշխարհ լցվավ լիություն, ավետի՛ս,  
Մեր տերն էլավ նախատակ, ավետի՛ս,  
Տժողքն էլավ խորտակ, ավետի՛ս,

Ապա մեղեդին փոխվում էր.

Մարիամն կենաց տունն հերին, ավելույա՛,  
Ծնավ, պիրեց Հիսուս որդին, ավելույա՛,  
Քրիստոս որդի կյրկանոցին, ավելույա՛,  
Քյավոր՝ Սիմոն խերն արեցին, ավելույա՛ :

Սրան հաջորդում էր հարց. – Ինչպե՞ս է ձեր փոքրիկի անունը:

- Գրիգոր:

- Գրիգորի ճութ ճրթացավ, ավելույա,  
Քյանց բարդի ծառ հերկնցավ, ավելույա,  
Խեր կերավ՝ խպարտացավ, ավելույա,  
Մեր կերավ՝ զվարթացավ, ավելույա,  
Քյոր կերավ՝ խորոտկցավ, ավելույա,  
Ախպեր կերավ՝ հայլորցավ, ավելույա,  
Մամիկ կերավ՝ ջրհեղցավ, ավելույա,  
Պապիկ կերավ՝ անմախացավ, ավելույա,  
Խորքուր կերավ՝ գյումրախացավ, ավելույա,

Խորոխպեր կերավ՝ գյումրախացավ, ալելույա,  
Քեռաղեն կերավ՝ առողջացավ, ալելույա,  
Քեռամեն կերավ՝ բախտավորցավ, ալելույա,  
Մորքուր կերավ՝ ինգավ թոնիր, կոտն իրիցավ, ալելույա,  
Քյանիմ կերան՝ չպստկցավ, ալելույա, չպստկցավ, ալելույա: